Հաստատված է
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Վարչության
20.12.2024 թ. թիվ 247/16-20.12.2024 որոշմամբ
Վարչության նախագահ
_____Ա. Առաքելյան

Հրապարակման ամսաթիվը «27» «դեկտեմբեր» 2024թ..
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել, մանրամասն տեղեկատվության համար դիմել Բանկ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Ֆիզիկական անձանց պլաստիկ քարտերով տրամադրվող աշխատավարձային վարկային գծերի

ԵՐԵՎԱՆ 2024

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԱՅԻՆ	
Վարկի արժույթը	ՀՀ դրամ
Վարկի գումարը	50.000-4.000.000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել ամսական չհարկված եկամտի 10ապատիկից, AEB ONLINE/MOBILE համակարգերով՝ 50.000-1.500.000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել ամսական չհարկված եկամտի 6ապատիկից
Քարտի տեսակը	Ցանկացած հաշվարկային քարտ, որին փոխանցվում է աշխատավարձը
Տարեկան տոկոսադրույքը*	**17%,** AEB ONLINE/MOBILE համակարգերով՝ 16% **Փաստացի տոկոսադրույքը՝** 18.39%, AEB ONLINE/MOBILE համակարգերով՝ 17.23%
Վարկի ժամկետը	50.000-2.000.000 ՀՀ դրամ վարկային գծի դեպքում՝ 12-36 ամիս 2.000.001-4.000.000 ՀՀ դրամ վարկային գծի դեպքում ՝ 12-48 ամիս
Մարումների հաճախականությունը	• Ամսական հավասարաչափ (աննուիտետ) կամ ոչ հավասարաչափ (դիֆերենցված) • Վերջին 6 ամսում մայր գումարի հավասարաչափ մարումով • Ժամկետի վերջում • AEB ONLINE/MOBILE համակարգերով՝ Ամսական ոչ հավասարաչափ (դիֆերենցված) **Օգտագործված վարկի դիմաց հաշվարկված տոկոսն ենթակա է ամբողջությամբ վճարման հաշվարկման օրվանից սկսած մինչև 90-րդ օրը:**
Ապահովվածությունը	• 1 երաշխավոր/համավարկառու պահանջվում է, եթե 1. վարկային գծի գումարը գերազանցում է եկամտի վեցապատիկից, 2. վարկային գծի գումարը գերազանցում է 2.500.000 ՀՀ դրամից (չի պահանջվում, եթե գումարը չի գերազանցում աշխատավարձի եռապատիկը), • լրացուցիչ երաշխավոր/համավարկառու պահանջվում է, եթե 1. Հայտատուի տարիքը 63 տարեկան և ավելի բարձր է, 2. վարկային գծի գումարը գերազանցում է 3.000.000 ՀՀ դրամից (չի պահանջվում, եթե գումարը չի գերազանցում աշխատավարձի եռապատիկը) Երաշխավոր ընտանիքի անդամը Բանկի առջև պետք է կրի համապարտ պատասխանատվություն, հակառակ դեպքում՝ սուբսիդիար պատասխանատվություն: AEB ONLINE/MOBILE համակարգերով՝ Երաշխավոր չի պահանջվում
Տրամադրման եղանակը	Անկանխիկ
Որոշման և տրամադրման ժամանակահատվածը	Մինչև 5 աշխատանքային օր AEB ONLINE/MOBILE համակարգերով՝ Առցանց դիմում ներկայացնելու պահին
Վարկի ձևակերպումն իրականացվում է	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Գլխամասային Գրասենյակի և մասնաճյուղերի կողմից: **Բացառությամբ Նաիրի ԲԿ, Ռոսիա-1 և Արարատյան մասնաճյուղերի:** AEB ONLINE/MOBILE համակարգերով
Վարկառուի նկատմամբ պահանջները	• 18 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական անձ, • Գրանցված և բնակվող Հայաստանի Հանրապետությունում • Աշխատավարձը ստանում է ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ պլաստիկ քարտով

Տույժեր	Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված գումարների (վարկ, տոկոս, այլ վճարներ) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տույժ ժամկետանց գումարի 0.13 տոկոսի չափով (օրական):
Քաղվածքի տրամադրում	**Անվճար**
Դրական որոշման հիմքերը	• Դրական վարկային պատմություն (առկայության դեպքում), • Ներկայացված փաստաթղթերի արժանահավատություն, • Կայուն և բավարար եկամտի աղբյուր:
Բացասական որոշման հիմքերը	• Հաճախորդի ֆինանսական դրության բացասական գնահատականը, • Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը, • Հաճախորդի բացասական վարկային պատմությունը, • Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կխոչընդոտեն վարկի մարմանը
Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը	1.Անձնագրի պատճեն 2.Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ, 3.Եկամուտը հավաստող փաստաթուղթ 4.Ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր 5. AEB ONLINE/MOBILE համակարգերով դիմելու դեպքում փաստաթղթեր չեն ներկայացվում

*Աշխատավարձային նախագծի շրջանակներում սահմանվել է հատուկ առաջարկ ուսումնական հաստատությունների, SS և հեռահաղորդակցության ոլորտի աշխատակիցների և բուժաշխատողների համար մասնավորապես.

	Տոկոսադրույք	ժամկետ	Փաստացի տոկոսադրույք
Ուսումնական հաստատությունների աշխատակիցներին	13.5-14.75% (կախված վարկի ժամկետից և վարկառուի աշխատանքային ստաժից)	12-48 ամիս	14.37-15.79%
SS և հեռահաղորդակցության ոլորտի աշխատակիցներին	15%	12-48 ամիս	16.08%
Բուժաշխատողներին	13.5-14.75% (կախված վարկի ժամկետից և վարկառուի աշխատանքային ստաժից)	12-48 ամիս	14.37-15.79%

Նշված արտոնյալ տոկոսները չեն գործում AEB ONLINE/MOBILE համակարգերով դիմելու դեպքում:

Առավել մանրամասն կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ https://www.aeb.am/hy/45//tab/114

Ուշադրություն.Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:
Ուշադրություն.Որպես վարկի լրացուցիչ ապահովման միջոց Բանկը կարող է պահանջել նաև այլ անձի/անձանց երաշխավորությունը(ները):
Ուշադրություն: Վարկ ստանալու համար դիմելիս Բանկը Ձեզ տրամադրում է սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված է Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները: (ՀՀ դրամով վարկային գծերի դեպքում)
Ուշադրություն.Ելնելով տարաբնույթ հանգամանքներից, կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:
Ուշադրություն: Տոկոսները հաշվարկվում են վարկի օգտագործված մնացորդի նկատմամբ:
Ուշադրություն. Սպառողն/վարկառուն/ իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում

սպառողը պարտավոր է կրեդիտի գումարը օգտագործելու համար կրեդիտավորողին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են կրեդիտավորման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Կրեդիտավորման պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում սպառողից պահանջվել չի կարող:

Ուշադրություն: Սպառողն իրավունք ունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

Ուշադրություն. Վարկային գործառնությունների իրականացման շրջանակներում մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագներին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/uploads/varkayin_sakangneri_havelvac.pdf

Ուշադրություն:Պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման պայմաններին, ժամկետներին և սակագներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/hy/bankayin_hashiv :